Մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ Երևանի «Ա. Ղարիբյանի անվան թիվ 142 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի (13 դասաժամ), կենսաբանության (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի I մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ.

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են 2023 թ. փետրվարի 22-ից մինչև մարտի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10^{00}-15^{00}, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. մարտի 9-ին՝ ժամը 12^{00} ին**, ՀՀ ԿԳՄՍՆ Երևանի Ա. Ղարիբյանի անվան թիվ 142 ավագ դպրոցում, հասցեն՝ Երևան, Նոր Նորքի 4-րդ զանգված, Գյուլիքեվխյան 33:

Տեղեկությունների համար զանգահարել (010)63-59-50 հեռախոսահամարով: